

# ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ ԵՒ ՇՈՒՇԻ ԿԸ ՌՄԲԱԿՈՇՈՒԻՆ

## 23 ՄԵՌԵԱԿ, 140 ՎԻՐԱԻՈՐ ԵՒ ՄԵԾ ԱԻԵՐՆԵՐ

Շարաթ եւ Կիրակի, աղբբեջանական  
օրուժը բուն ռմբակոծութիւններ կատա-  
րած է Ստեփանակերտի եւ Շուշի վը-  
րայ, Երկուշաբթի, Օգոստոս 24-ին, մեր  
տաժ լուրերու համաձայն Երեւանէն, 23  
մեռալ վար, 140 վիրաւոր եւ մեծ էին  
նիւթական վնասները: Արդարեւ ռումբե-  
րը ինկած են Ստեփանակերտի կեղրոնը,  
հանրակացարան մը քարուքանդ եղած է  
եւ այլ շէնքեր ալ:

Գրաղներ արձակուած են նաեւ Մար-  
տունիի շրջանը, ուր 6 վիրաւոր կայ:  
Ուժեղ մարտեր կը շարունակուին Մար-  
տակերտի շրջանը, ի մասնաւորի Դրմբոն,  
որ դրաւուած էր Աղբբեջանցիներու կողմէ  
եւ ետ առնուած է:

Հայաստանեան ճակատի վրայ ռմբակո-  
ծութիւնները կը շարունակուին: Մարտեր  
կան Կրասնոսելսկ, ուր հայկական ուժերը  
ետ մղած են Աղբբեջանցիք: Ռումբեր  
նետուած են Տաուշի շրջանը, Վահան եւ  
Մովսէս գիւղերուն վրայ, նաեւ Իջեւանի  
շրջանը՝ Վաղաշէնի, եւ Բերքաբերի ուր  
բնակիչ մը մեռած է:

Շատ լարուած է կացութիւնը Վարդե-  
նիսի շրջանը. Օգոստոս 24-ին համեմա-  
տարար հանդարտ էր Գորիս, բայց ռում-  
բեր ինկած էին Կապանի շրջանը, Սալ  
գիւղի վրայ, վիրաւորներ կան:

\*\*

Օգոստոս 21-ին, Մոսկուայի մէջ, Ելցին  
եւ Լեւոն Տէր -- Պետրոսեան հանդիպում  
ունեցած են եւ քննարկած շրջանին կա-  
ցութիւնը: Համաձայնութիւն մը ստո-  
րագրուած է Հայաստանի տարածքը զըտ-  
նուող Ռուսաստանի զինուած ուժերու  
իրավիճակի մասին եւ միջադրային յա-  
րաբերութիւններու փոխադարձ հետա-  
քըքրութիւն ներկայացնող հարցերու:

### Մ Ա Մ Ո Ի Լ

Ստեփանակերտի ռմբակոծութեան կ'ար-  
ձագանդէին, Օգոստոս 24-ին, «Իւմա-  
նիք» եւ «Ֆիկառ», այս վերջինը թէեւ  
միայն Շարաթ օրուան ռմբակոծութեան  
տեղեակ էր: Համայնալար պաշտօնաթեր-  
թը կ'ըսէր թէ նուազագոյն 30 մեռեալ եւ  
200 վիրաւոր կայ, մինչ «Ֆիկառ» տասը  
մեռեալի եւ 30 վիրաւորի խօսք կ'ընէր:

Նանցիք իսկ վը խոստովանին որ խեղկա-  
տակութիւն մըն էր, մասխարատ մը: Տեղ  
տեղ խարդախութիւնները զլած անցած  
եւ ամէն երեւակայութիւն: Օրինակ՝  
Ջահէ, ուր վեց քուէակեղրոն կայ՝ օր-  
թոտքս, մարոնի, կաթողիկէ, սիւննի եւ  
չիւր որոնք նոյն տեղը չեն քուէարկեր:  
Ընտրական ցանկերուն վրայ 625 քուէար-  
կողներէն 70-ը՝ ծնած է 1850-էն 1900-ի  
ընթացքին:

Ձեռնպահութիւնը բոլոր մրցանիշները  
կոտրած է: Ըստ առաջին տուեալներու,  
մասնակցութիւնը 10-էն 30% եղած է  
քրիստոնեայ մեծամասնութիւն ունեցող  
շրջաններու մէջ, շատերու կողքերը ար-  
դէն սեւ ժապաւէններ կը կրէին ի նշան  
«Ազգային սուղի»: Քուէարկողներու թի-  
ւը մեծ եղած է Պաալպէք ուր Հեղպոլլան  
կը տիրապետէ, բայց, Խորհրդարանին  
նախագահը արդէն չեղեալ կը համարի  
կարգ մը շրջաններու ընտրութիւնները  
(Ջահէի պէս) ուր խարդախութիւնները  
շատ բացայայտ եղած են: Այս առաջին  
շրջանի ընտրութիւնները սահմանափակ-  
ուած էին Պէքաայի եւ հիւսիսային -- Լի-  
բանանի շրջանը: Յաջորդները՝ Օգոստոս  
30-ին Պէյրութ եւ, Լեւոնալիբանան, իսկ  
Սեպտեմբեր 6-ին հարաւային - Լիբանան:

Միջադէպեր ալ պատահած են եւ չորս  
մեռեալ կայ: Այնճարի մէջ է որ ասոնցմէ  
երկուքը մեռած կ'ըլլան (մէկը՝ զինուոր):

Դրամն ալ իր դերը խաղացած է այս  
կատակերգութիւն -- ընտրութիւններուն  
մէջ, որոնք առաջիններն են 1972-էն  
ի վեր:

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԱԱՍԹԻԻԽԻԹԻ ԹԵՐ ՈՒ ՂԷՄ պայքարը  
ծայր տուաւ գլխաւորարար Կիրակի, Օ-  
գոստոս 23-ին, երբ Մարի -- Ֆրանս Կառօ,  
մէկ կողմէ («Անթէն 2», ճշմարտութեան  
ժամ) ճէք Լանկ, միւս կողմէ (Կոան -  
ժիւրի ԷՌ - Թէ - ԷԼ) բուն կերպով  
ղէմ ու թեր ելոյթներ ունեցան, ուրիշ-  
ներու հետ անշուշտ, ինչպէս Ֆիլիպ Սէ-  
կէն (ղէմ), Նիքոլա Սարքոզի, Էտուար  
Պալատիւր (թեր) նաեւ Հարլէմ Տէզիւր  
(թեր) որ կուսակցութեան մը հիմնա-  
դիրն է՝ Շարժում եւ Ժան -- Մարի Լը Փէն  
(ղէմ) եւայլն, եւայլն: Խանդարողը ար-  
դէն պարզուած այս հակասական պատ-  
կէտ է երբ ուժն են նոյն սաստկութեամբ